

# Ի՞նչ է ՆԱՏՕ-ն

Այցելեք մեզ՝
www.natoinfo.am

Հյուսիս-Ատլանտյան Դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ) աշխարհի խոշոր միջազգային կառույցներից մեկն է: Այն քաղաքական եւ ռազմական դաշինք է, որը միավորում է 30 անդամ-երկրների Եվրոպայից եւ Հյուսիսային Ամերիկայից:

Այս երկրները համագործակցում են անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում: ՆԱՏՕ-ն քաղաքական եւ անվտանգության հարցերի շուրջ համագործակցության յուրօրինակ կապ է ապահովում երկու մայրցամաքների միջեւ:



## ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք հաճախ բնական ենք ընդունում այն, որ կարող ենք ազատ ապրել անվտանգ եւ տնտեսապես կայուն միջավայրում: Ամենօրյա անվտանգությունը բոլոր ոլորտներում մեր բարեկեցության բանալին է:

## ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Երկխոսության եւ համագործակցության հաստատումը առանցքային է բարիդրացիական հարաբերությունների համար: ՆԱՏՕ-ն բացառիկ հնարավորություն է ընձեռում անդամ եւ գործընկեր երկրներին խորհրդակցել անվտանգության հարցերի շուրջ՝ վստահություն կառուցելու եւ հակամարտությունները կանխելու համար: Գործնական համագործակցության եւ բազմակողմ նախաձեռնությունների շնորհիվ երկրները միասին հաղթահարում են նոր մարտահրավերները:

## ՊԱՅՔԱՐ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԴԵՄ

Սպառնալիքների բնույթի փոփոխությամբ փոխվում են նաեւ խաղաղության պահպանման մեթոդները: ՆԱՏՕ-ն հարմարեցնում է իր պաշտպանական կարողություններն այսօրվա սպառնալիքներին: Դա ենթադրում է ուժերի հարմարեցում եւ բազմազգ մոտեցումներ ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքի եւ այլ սպառնալիքներին դիմակայելու համար:

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կայունության առավելություններից օգտվում են միաժամանակ մի քանի կողմեր: Առանցքային խնդիր է կայունացնել տարածաշրջանները, որտեղ լարվածությունը սպառնում է անվտանգությանը: ՆԱՏՕ-ն, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, ակտիվ դեր է խաղում ճգնաժամերի կառավարման գործողություններում:



# Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ՆԱՏՕ-Ն

ՆԱՏՕ-ն հանձնառու է պաշտպանել իր անդամ-երկրներին՝ քաղաքական և ռազմական միջոցներով: Այն խրախուսում է խորհրդատվությունը և համագործակցությունը ՆԱՏՕ-ի ոչ-անդամ պետությունների հետ անվտանգությանն առնչվող լայն հարցերի շրջանակում, ինչպիսիք են, օրինակ, պաշտպանական բարեփոխումները և խաղաղապահությունը:

Քննարկումների և գործընկերության միջոցով, ՆԱՏՕ-ն իր ներդրումն է բերում հակամարտությունների կանխարգելման գործում թե անդամ երկրներում, թե դրանց սահմաններից դուրս:

Այն առաջ է մղում ժողովրդավարական արժեքները և հանձնառու է խնդիրների խաղաղ կարգավորմանը: Եթե դիվանագիտական ջանքերը ձախողվում են, դաշինքն ունի ռազմական կարողություն, որն անհրաժեշտ է ճգնաժամերի կառավարման և խաղաղապահության համար:

ՆԱՏՕ-ն ունի նաև երրորդ ուղղություն, որի շրջանակներում օգնում է անդամ և գործընկեր երկրներին հաղթահարել տարբերային աղետները, ինչպես նաև խթանել համագործակցությունը գիտության և շրջակա միջավայրի ոլորտներում:

# ԻՆՉՊԵ՞Ս Է ՆԱՏՕ-Ն ԳՈՐԾՈՒՄ

ՆԱՏՕ-ի անդամ յուրաքանչյուր պետություն ունի իր մշտական պատվիրակությունը Դաշինքի կենտրոնակայանում՝ Բրյուսելում: Պատվիրակությունը ղեկավարում է դեսպանը:

Հյուսիս-Ատլանտյան խորհուրդն ամենակարևոր քաղաքական որոշումները կայացնող մարմինն է կազմակերպության ներսում: Այն նախագահում է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը, որն օգնում է անդամ երկրներին համաձայնության հասնել տարբեր առանցքային հարցերի շուրջ:

ՆԱՏՕ-ի կոմիտեներից յուրաքանչյուրում բոլոր որոշումները կայացվում են կոնսենսուսով: «ՆԱՏՕ-ի որոշում» ասվածն արտահայտում է բոլոր անդամների հավաքական կամքը:

ՆԱՏՕ-ն իր ենթակայության տակ ունի փոքրաթիվ մշտական ուժեր: Երբ Հյուսիս- Ատլանտյան խորհուրդը համաձայնում է գործողություն սկսել, անդամ երկրներն ուժեր են տրամադրում կամավորության սկզբունքով: Առաքելությունն ավարտելուն պես, ուժերը վերադառնում են իրենց երկրներ:

Ռազմական հրամանատարության դերն է համակարգել և իրականացնել այդ գործողությունները: Այս կառույցը բաղկացած է կենտրոնակայանից և անդամ երկրներում տեղակայված կայաններից:

ՆԱՏՕ-ի առօրյա գործունեությունը, քաղաքացիական և ռազմական կառույցները և անվտանգության ծրագրերը ֆինանսավորվում են ընդհանուր բյուջեից, որին անդամ երկրները ներդրում են կատարում ծախսերը կիսելու նախապես համաձայնեցված բանաձևով:



# ԱՆԴԱՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ

Հյուսիս-Ատլանտյան Դաշինքի հիմնադրման համաձայնագիրը ստորագրվել է 1949թ.-ի ապրիլի 4-ին:

### ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐ (+ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ)

Ալբանիա - 2009
ԱՄՆ - 1949
Բելգիա - 1949
Բուլղարիա - 2004
Գերմանիա - 1955
Դանիա - 1949
Էստոնիա - 2004
Թուրքիա - 1952
Իսլանդիա - 1949
Իսպանիա - 1982
Իտալիա - 1949
Լատվիա - 2004
Լեհաստան - 1999
Լիտվա - 2004
Լյուքսեմբուրգ - 1949
Խորվաթիա - 2009
Կանադա - 1949
Հյուսիսային Մակեդոնիա - 2020
Հունաստան - 1952
Հունգարիա - 1999
Միացյալ Թագավորություն - 1949
Մոնտենեգրո - 2017
Նիդեռլանդներ - 1949
Նորվեգիա - 1949
Չեխիա - 1999
Պորտուգալիա - 1949
Ռումինիա - 2004
Սլովակիա - 2004
Սլովենիա - 2004
Ֆրանսիա - 1949

### ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Ադրբեջան
Ավստրիա
Բելառուս
Բոսնիա և Հերցեգովինա
Թուրքմենստան
Իռլանդիա
Հայաստան
Ղազախստան
Ղրղզստան
Մալթա
Մոլդովա
Շվեդիա
Շվեյցարիա
Ուզբեկստան
Ուկրաինա
Ռուսաստան
Սերբիա
Վրաստան
Տաջիկստան
Ֆինլանդիա

### ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Ալժիր
Եգիպտոս
Թունիս
Իսրայել
Հորդանան
Մավրիտանիա
Մարոկկո

### ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Բահրեյն
Միացյալ Արաբական Էմիրություններ
Քաթար
Քուվեյթ

### ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Ավստրալիա
Աֆղանստան
Իրաք
Կոլումբիա
Կորեայի Հանրապետություն
Ճապոնիա
Մոնղոլիա
Նոր Զելանդիա
Պակիստան

0351-20 © NATO 2020 - ARM